# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/L-5 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 3 | - | - | - | - | «Ոստ. երկարամյա ծառայության համար» I աստիճան մեդալ: Մեդալը բաղկացած է երկու մասից՝ կախիչից և դրան կապօղակով ամրացված սկավառակից: Կախիչը պատրաստվում է թեթև մետաղից և դարձերեսի կողմից ունի հատուկ ամրակ՝ պարգևատրվածի հագուստին ամրանալու համար: Կախիչի վերևի մասի երկարությունը 26 մմ է, ներքևի մասինը՝ 46 մմ, իսկ հաստությունը՝ 1 մմ: Կախիչի վերևի մասի երկարությունը՝ կենտրոնից մինչև ներքևի գագաթը՝ վերից վար 50 մմ է: Կախիչը |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | պաստառապատված է 24 մմ լայնություն ունեցող կարմիր գույնի մետաքսյա ժապավենով: Ժապավենի եզրերն եզերված են 2 մմ լայնություն ունեցող կանաչ գույնի շերտագծով: Ժապավենի կենտրոնով, վերից վար անցնում է 3 մմ լայնություն ունեցող դեղին գույնի մեկ շերտագիծ: Մեդալի սկավառակը ոսկեգույն է, պատրաստվում տոմպակից: Սկավառակի տրամագիծը 32 մմ է, հաստությունը` մոտավորապես 3 մմ: Սկավառակի դիմերեսի կենտրոնում պատկերված է սուր և վահան ռելիեֆային ցայտաքանդակ: Վահանի ներքևի մասում, սկավառակի շրջանագծին զուգահեռ պատկերված են կաղնու ճյուղուղեր, իսկ կենտրոնում` Հայաստանի Հանրապետության ռելիեֆային ցայտաքանդակը` էմալապատված եռագույն էմալով: Սկավառակի հակառակ երեսի կենտրոնական մասում ուռուցիկ տառերով գրվում է` ««20 ՏԱՐՎԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ»» բառերը: Շրջանագծին զուգահեռ ուռուցիկ տառերով գրվում է ««ՀԱՅԱՍՏԱՆԻ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ»» բառերը: Մեդալները պետք է արտադրված լինեն դրոշման ճանապարհով, որը կապահովվի մեդալների բացարձակ միանմանությունը և չափերի նվազագույն շեղումները: Մեդալները դարձերեսի կողմից կրում են արտադրողի անվանանիշը` հետագա կեղծումներց խուսափելու համար: Փաթեթավորումը` Հատուկ ստվարաթղթե տուփերով: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Ереванский ювелирный завод имени Эмиля Григоряна ОАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/L-5 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 3 | | | | | |